

## 2. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

### 2.1 ՄԱԿ-ի, ՄԱՀ-ի, ՀԱՄԱՇՆԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ, ՏՀՋԿ-ի ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԲԱԺՆԻ (ԵՎՐՈՍՏԱՏ) ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ԱՀՀ-93) ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

#### 2.1.1. Ընդհանուր դրույթներ

Ազգային հաշիվների համակարգը (ԱՀՀ) մակրոտնտեսական գործընթացների նկարագրման և վերլուծության համար կիրառվող փոխկապակցված ցուցանիշների համակարգ է: Այս համակարգն օգտագործվում է աշխարհի ավելի քան 150 ազատական տնտեսակարգ ունեցող երկրներում: ԱՀՀ-ն հանդես եկավ XX դարի կեսերին՝ տնտեսական առումով առավել զարգացած երկրներում, կապված ազատական տնտեսակարգի կարգավորման և տնտեսական քաղաքականության ձևավորման համար անհրաժեշտ գործնական միջոցների կիրառմամբ պայմանավորված համակարգված տեղեկատվության պահանջարկով:

Ըստ հիմնական մեթոդաբանական դրույթների, ԱՀՀ-ն միասնականացվում է վճարային հաշվեկշռի և միջոցառային հաշվեկշռի հետ, դրա տվյալները լայնորեն օգտագործվում են միջազգային տնտեսական կազմակերպությունների, այդ թվում՝ ՄԱԿ-ի համապատասխան ստորաբաժանումների, Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության, ԱՊՀ միջպետական վիճակմիտեի կողմից:

#### 2.1.2 Ազգային հաշիվների կառուցվածքը

Ազգային հաշիվների համակարգն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակաշրջանում երկրում տնդի ունեցող տնտեսական երևույթների համապարփակ նկարագրություն:

Ազգային հաշիվների համակարգը վիճակագրության մեջ առկա առավել լիարժեք համակարգն է, որն ի տարբերություն տնտեսության որևէ կոնկրետ կողմն արտացոլող տնտեսական վիճակագրության այլ ճյուղերի, արտացոլում է ողջ տնտեսությունն՝ ամբողջությամբ:

Ազգային հաշիվների համակարգում յուրաքանչյուր առանձին ցուցանիշ հանդիսանում է հաջորդական համակարգի մի մասը:

Ազգային հաշիվներն արտադրության մակարդակի, սպառման, կապիտալ ներդրումների, ներմուծման և արտահանման, ավելացված արժեքի, պաշարների փոփոխության, ակտիվների, պասիվների և այլնի գնահատումներն են՝ դրամական արտահայտությամբ, դրանք ցույց են տալիս հիմնական մակրոտնտեսական միասնականացված ցուցանիշների չափերը և գլխավոր քաղադրամասերը:

ԱՀՀ-ն կազմված է հաջորդաբար փոխկապակցված հաշիվներից, որոնք վերաբերվում են տվյալ ժամանակաշրջանում տնդի ունեցող տնտեսական գործունեության տարբեր տեսակներին: Հոսքերի յուրաքանչյուր հաշիվ արտացոլում է գործունեության որոշակի տեսակ, օրինակ, եկամուտների կամ արտադրության ձևավորում, բաշխում, վերաբաշխում կամ օգտագործում: Յուրաքանչյուր հաշիվ հավասարակշռվում է հաշվեկշռող հոդվածի ներդրման ճանապարհով, որը որոշվում է որպես ռեսուրսների (միջոցների աղբյուրներ, այսուհետև՝ ռեսուրսներ) և օգտագործման ամփոփ ցուցանիշների տարբերություն: Հաշվեկշռող հոդվածը մի հաշվից տեղափոխվում է որպես հաջորդ հաշվի առաջին հոդված (ռեսուրսային մասում), ինչն ապահովում է հաշիվների հաջորդականության ներկայացումն՝ աբողջական տեսքով:

Ազգային հաշիվների համակարգն ընդգրկում է հետևյալ հաշիվները՝

- *ապրանքների և ծառայությունների հաշիվ,*
- *արտադրության հաշիվ,*
- *սկզբնական եկամուտների ձևավորման հաշիվ,*
- *սկզբնական եկամուտների բաշխման հաշիվ,*
- *եկամուտների երկրորդային բաշխման հաշիվ,*
- *եկամուտների օգտագործման հաշիվ,*
- *կապիտալի հետ գործառնությունների հաշիվ,*
- *ֆինանսական հաշիվ:*

**Ապրանքների և ծառայությունների հաշիվը** յուրատեսակ ամփոփ աղյուսակ է: Ինչպես և բոլոր հաշիվները, այն կազմված է երկու մասից՝ ”ռեսուրսներ” մասում ցույց է տրվում ապրանքների և ծառայությունների արտադրության և ներմուծման ծավալները, ”օգտագործում” մասում՝ այդ ապրանքների և ծառայությունների ծավալների օգտագործումը՝ սպառման (միջանկյալ և վերջնական), կուտակման (հիմնական և շրջանառու կապիտալի) և արտահանման նպատակով: Հաշվի յուրաքանչյուր մաս ձևավորվում է ինքնուրույն՝ վիճակագրական տեղեկատվության սեփական հոսքերի հիման վրա, որի հետևանքով դրանց վերաբերյալ հանրագումարները կարող են միմյանցից որոշ չափով տարբերվել: Հաշվի հաշվեկշռման համար այդ տարբերությունը ձևակերպվում է ”վիճակագրական շեղում” ցուցանիշի տեսքով, որը հաշվի բոլոր մասերի կառուցման ժամանակ բնութագրում է գումարային ”սխալը”:

Համալսառն ներքին արդյունքի 4-5%-ը չգերազանցող վիճակագրական շեղումը թույլատրելի է համաշխարհային պրակտիկայում և վկայում է հաշվարկների մշակման բավարար որակի մասին:

**Արտադրության հաշիվն** արտացոլում է անմիջականորեն արտադրական գործընթացներին վերաբերվող գործառնությունները: Այդ հաշվում որոշվում է տնտեսության

կարևորագույն ցուցանիշի՝ ՀՆԱ-ի, հաշվարկման համար հիմք հանդիսացող ավելացված արժեքը: Արտադրության հաշվի ռեսուրսային մասը կազմված է՝

- *ապրանքների և ծառայությունների համախառն թողարկումից ու*
- *ապրանքների և ներմուծման զուտ հարկերից\*:*

Արտադրության հաշվի օգտագործումը ներառում է միջանկյալ սպառումը և *հաշվի հաշվեկշռող հոդվածը՝ ՀՆԱ-ն, շուկայական գներով:*

**Սկզբնական եկամուտների ձևավորման հաշիվն** արտացոլում է արտադրության գործընթացների հետ անմիջականորեն կապված բաշխողական գործառնությունները: Հաշվի ռեսուրսային մասը կազմված է հետևյալ բաղադրիչներից.

- *ՀՆԱ շուկայական գներով,*
- *արտադրության և ներմուծման սուբսիդիաներ:*

Օգտագործումը ներառում է ՀՆԱ-ի սկզբնական բաշխման տարրերը՝

- *աշխատողների աշխատանքի վարձատրություն,*
- *արտադրության և ներմուծման հարկեր,*
- *հիմնական միջոցների սպառում,*
- *տնտեսության շահույթ:*

*Հաշվեկշռող հոդվածը համախառն շահույթն է {համախառն խառը եկամուտ (□□□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□, gross mixed income) } կամ զուտ շահույթը (զուտ խառը եկամուտ):*

**Սկզբնական եկամուտների բաշխման հաշիվն** արտացոլում է տնտեսության մակարդակով եկամուտների բաշխումը և վերաբաշխումը՝ հաշվի առած այլ երկրների հետ հարաբերությունները: Այն բնութագրում է արտադրական գործունեությունից և սեփականությունից ստացված սկզբնական եկամուտների բաշխումը: Ռ-րեսուրսային մասում ցույց են տրվում ինչպես արտադրական գործունեությունից ստացված եկամուտները (տնտեսության համախառն շահույթը, աշխատողների աշխատանքի վարձատրությունը, արտադրության և ներմուծման հարկերը), այնպես էլ վերաբաշխողական գործառնությունների արդյունքում ստացված եկամուտների այլ տեսակները՝ հաշվի առած այլ երկրներից մուտքերը (եկամուտներ սեփականությունից, եկամուտներ ձեռնարկատիրությունից): Օգտագործման մեջ արտացոլվում են սուբսիդիաները, ինչպես նաև, եկամուտները սեփականությունից և ձեռնարկատիրական եկամուտները: *Հաշվի հաշվեկշռող հոդվածը սկզբնական եկամուտների սալդոն է:*

**Եկամուտների երկրորդային բաշխման հաշիվը** սկզբունքորեն ընդգրկում է միայն դրամական ձևով տրանսֆերտների միջոցով եկամուտների վերաբաշխումը, որը հնարավորություն

\* *այստեղ և հետագայում, այս գլխի շրջանակում, կարող են հանդիպել տերմիններ, հասկացություններ, որոնք պարտադիր չէ, որ կիրառվեն Հայաստանում և ամբողջությամբ համընկնեն ազգային օրենսդրության մեջ գոյություն ունեցածի հետ, բայց բերված են միջազգայնորեն ընդունված դրույթներում:*

է տալիս վերաբաշխման գործընթացներում սահմանազատել երկու փուլ՝ *դրամական ձևով տրանսֆերտներ և բնեղեն ձևով տրանսֆերտներ*: Այդպիսի տարբերակում, տվյալ դեպքում, կիրառվում է մի կողմից՝ տնային տնտեսությունների և մյուս կողմից՝ պետական կառավարման մարմինների և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների (SSUՈԱԿ) միջև հարաբերություններում: Սկզբնական եկամուտների սալդոյի հետ մեկտեղ, ռեսուրսների մասում արտագույվում են ընթացիկ եկամտահարկերը, հարստության վրա հարկերը և այլն, ինչպես նաև, այլ ընթացիկ տրանսֆերտները: Օգտագործման մեջ արտագույվում են տրանսֆերտների նույն տեսակները: Ընդ որում, հատվածների մի մասի համար այդպիսի տրանսֆերտները վերաբերվում են ռեսուրսներին, իսկ մյուսների համար՝ օգտագործմանը, դրանց կոնկրետ բովանդակությունը տարբերվում է՝ կախված հատվածից: *Հաշվի հաշվեկշռող հոդվածը հանդիսանում է համախառն տնօրինվող եկամուտը:*

**Եկամուտների օգտագործման հաշիվն** արտագույվում է տնօրինվող եկամուտը՝ որպես ռեսուրս: Օգտագործման մեջ արտագույվում է տնօրինվող եկամտի բաշխումը՝ վերջնական սպառման և կուտակման միջև: Համակարգի շրջանակում վերջնական սպառումն իրականացվում է միայն պետական կառավարման մարմինների, SSUՈԱԿ-ի և տնային տնտեսությունների կողմից: *Եկամուտների օգտագործման հաշվի համար հաշվեկշռող հոդված է հանդիսանում խնայողությունը:*

**Կապիտալի հետ գործառնությունների հաշիվը** նախատեսված է հիմնական և շրջանառու միջոցների իրական կուտակման գործընթացի, ոչ նյութական և ոչ ֆինանսական ակտիվների, ինչպես նաև, դրանց ֆինանսավորման աղբյուրների բնութագրման համար: Կապիտալի հետ գործառնությունների հաշվում արտագույվում են ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերման հետ կապված գործառնությունները և հարստության վերաբաշխմանը հանգեցնող կապիտալ տրանսֆերտները: Հաշվի ռեսուրսային մասում ցույց են տրվում զուտ խնայողությունները, ստացման ենթակա, և վճարման համար նախատեսված՝ կապիտալ տրանսֆերտները, որոնք հնարավորություն են տալիս որոշելու կապիտալի զուտ արժեքի փոփոխությունները, ինչը պայմանավորված է խնայողությամբ և կապիտալ տրանսֆերտներով: Օգտագործման մեջ ցույց են տրվում ոչ ֆինանսական ակտիվներում տարբեր ձևերի ներդրումները (հիմնական միջոցների համախառն կուտակում, հիմնական կապիտալի սպառում, նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխություն, արժեքների ու հողի զուտ գնում և ոչ նյութական ակտիվներ): *Սույն հաշվի հաշվեկշռող հոդվածը հանդիսանում է կամ զուտ վարկավորումը (+), կամ զուտ փոխառումները, (ներգրավում) հետագայում՝ փոխառում(-), {զուտ վարկեր (+) կամ զուտ պարտքեր (-)}:*

ԱՀՀ-93 մեթոդաբանության համաձայն, ԱՀՀ-ի համակարգում ընդգրկվում է նաև ֆինանսական հաշիվը:

**Ֆինանսական հաշիվ** \*\* - դա այն հաշիվն է, որտեղ գրանցվում են ֆինանսական ակտիվների և պասիվների գործառնությունները, որոնք իրականացվում են կառուցվածքային միավորների, ինչպես նաև, կառուցվածքային միավորների ու “արտերկրի” միջև: Հաշվի ձևի մասում արտացոլվում է ձեռքբերումը՝ հանած ֆինանսական ակտիվների դուրս գրումը, իսկ այդ մասում՝ ընդունումը՝ հանած մարված պարտավորությունները: Պարտավորությունների գուտ ընդունումից հանած ֆինանսական ակտիվների ձեռքբերումը, արժեքային արտահայտությամբ հավասար է (հակառակ նշանով) գուտ վարկավորմանը (փոխառումներին), որն իրենից ներկայացնում է կապիտալի հետ գործառնությունների հաշվի հաշվեկշռող հոդված:

Ֆինանսական հաշիվը հանդիսանում է հաշիվների լրիվ հաջորդականության մեջ վերջին հաշիվը, որտեղ արտացոլվում են գործառնությունները կառուցվածքային միավորների միջև: Ի տարբերություն նախկինում դիտարկված այլ հաշիվների, ֆինանսական հաշիվը չունի հաշվեկշռող հոդված, որը կտեղափոխվի այլ հաշվի վրա: Դրա հետ մեկտեղ, ֆինանսական հաշվի սալոնն մեծությամբ հավասար է կապիտալի հետ գործառնությունների հաշվի հաշվեկշռող հոդվածին, սակայն հակառակ նշանով: Կարող են նկատվել որոշ շեղումներ, որոնք բացատրվում են տարբեր վիճակագրական աղբյուրներից օգտվելու փաստով: Այս երկու հաշիվների սալոնների հաշվարկը և համադրումը կարևորվում է նրանով, որ կապիտալի հետ գործառնությունների հաշվի սալոնն ցույց է տալիս տնտեսության հատվածների համախառն տնօրինվող եկամտի և ապրանքների և ծառայությունների ձեռք բերման համար կատարվող ծախսերի տարբերությունը, իսկ ֆինանսական հաշվի սալոնը՝ այդ տարբերությամբ պայմանավորված գուտ ֆինանսական հոսքերը:

Ֆինանսական հաշիվը հանդիսանում է կուտակումը բնութագրող հաշիվներից երկրորդը: Հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև վերջ ֆինանսական ակտիվներին և պասիվներին վերաբերող ակտիվների և պասիվների հաշվեկշիռներում բոլոր փոփոխությունները պետք է պայմանավորված լինեն ֆինանսական գործառնություններով, ֆինանսական ակտիվների ծավալում այլ փոփոխություններով և վերագնահատումներով:

*Ներկայացված բոլոր վերոհիշյալ հաշիվները դասակարգվում են ընթացիկ և կուտակման հաշիվների: Ընթացիկ հաշիվներն արտացոլում են ընթացիկ հաշվետու տարում ավարտվող գործառնությունները: Դրանք ընդգրկում են արտադրության հաշիվը, բաշխման հաշիվը և եկամտուտների օգտագործման հաշիվը: Կուտակման հաշիվներն արտացոլում են օբյեկտների ձեռքբերումը, օգտագործումը և դուրսգրումը, որոնք շարունակում են օգտագործվել հաջորդ ժամանակաշրջաններում: Կուտակման հաշիվներն ընդգրկում են. կապիտալի հետ գործառնությունների հաշիվը, ֆինանսական հաշիվը և ակտիվների այլ փոփոխությունների հաշիվները:*

Համակարգի հաշիվներն ու աղյուսակները պարունակում են որոշակի ժամանակաշրջանում տեղի ունեցող դեպքերի հետևանքների և տնտեսական գործողությունների, ինչպես նաև այդ

\*\* Ներկայումս Հայաստանում չի հաշվարկվում (սկսված են սխեմաների մշակման աշխատանքները՝ 2001 թ.-ից ներդրման և օգտագործման նպատակով) :

Ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ ակտիվների և պասիվների վիճակի վերաբերյալ տեղեկատվություն: Տվյալ ժամանակաշրջանի հաշիվներում և աղյուսակներում դեպքերի

հետևանքներն ու գործողությունները արտացոլող գրառումները բնութագրում են հոսքերը, իսկ նույն ժամանակաշրջանի հաշիվներում և աղյուսակներում ակտիվները և պասիվները արտացոլող գրառումները բնութագրում են պաշարները: Հոսքերի և պաշարների փոփոխության միջև գոյություն ունի անխզելի կապ: Հոսքերը չի կարելի դիտարկել առանձին, անհրաժեշտ է հաշվի առնել մինչև հոսքերի առաջացումը և դրանից հետո եղած դրությունը: Հոսքերի և պաշարների հաշվառումը պետք է համաձայնեցված լինի հաշվառումն արտացոլելու ժամանակի հետ: Համակարգն ապահովում է հոսքերի և պաշարների լիարժեք ամբողջականացումը, այլ կերպ ասած, պաշարներում փոփոխությունները կարելի է որոշակիորեն բացատրել հիմք ընդունելով հաշվառված հոսքերը:

Հոսքերի հաշիվները, կառուցվածքային հատվածների հաշիվների լրիվ հաջորդականությամբ, ներկայացված են արտադրությունը, եկամուտը և եկամտի օգտագործումը բնութագրող ընթացիկ գործառնությունների հաշիվներով և երկու հաշվեկշիռների կազմման ժամանակների միջև տեղի ունեցած, փոփոխությունների ամբողջությունն արտացոլող կուտակման հաշիվներով:

**Հոսքեր.** Դրանք տնտեսական հոսքեր են, որոնք արտացոլում են տնտեսական արժեքի ստեղծումը, վերափոխումը, փոխանակումը, փոխանցումը կամ վերացումը: Դրանք ունեն համապատասխան յուրահատուկ բնութագրեր (աշխատավարձ, հարկեր, տոկոսներ, կապիտալի հոսքեր և այլն):

**Պաշարները** բնութագրում են ակտիվների և պասիվների մեծությունը ժամանակի որոշակի պահին: Դրա հետ մեկտեղ, պաշարները կապված են հոսքերի հետ. դրանք ստեղծվում են նախորդ ժամանակաշրջանների գործառնությունների և այլ հոսքերի արդյունքում և փոփոխվում են՝ կախված դիտարկվող ժամանակաշրջանում գործառնություններից և այլ հոսքերից: Պաշարները ձևավորվում են տվյալ ակտիվի կամ պասիվի պահպանման ժամանակաշրջանում դրանց արժեքի ու ծավալի որոշակի փոփոխության պայմաններում, դրանց անընդմեջ մուտքագրման և դուրս գրման գործընթացում:

Տնտեսական հոսքերը լինում են երկու տեսակ: Հոսքերի մեծ մասը գործառնություններ են: Այն հոսքերը, որոնք ներառվում են համակարգի մեջ, բայց չունեն գործառնության բնութագիր (այսինքն, կառուցվածքային միավորների միջև փոխադրություն կամ գործողությունը մեկ կառուցվածքային միավորի շրջանակում), կոչվում են “այլ հոսքեր”: Դրանք կուտակման երկու հաշիվներն են՝ ակտիվների ծավալում այլ փոփոխությունների հաշիվը և վերագնահատման հաշիվը:

**Ակտիվների այլ փոփոխությունների հաշիվներն** արտացոլում են գործառնությունների հետ կապ չունեցող փոփոխությունները և դրանց մեջ տեղ գտած գրառումներն ընդգրկում են

ակտիվներում, պասիվներում և կապիտալի գուտ արժեքում ամենատարբեր տեսակի

փոփոխություններ: Դրանք վերաբաժանվում են ակտիվների ծավալում այլ փոփոխությունների հաշվի և վերագնահատման հաշվի:

**Ակտիվների ծավալում այլ փոփոխությունների հաշիվ:** Ակտիվների ծավալում այլ փոփոխությունների հաշիվն արտացոլում է սկզբնական և վերջնական հաշվեկշիռների միջև ընկած ժամանակահատվածում ակտիվների, պասիվների և կապիտալի գուտ արժեքի փոփոխությունը, որը չի հանդիսանում կապիտալի հետ գործառնությունների հաշվում և ֆինանսական հաշվում արտացոլվող կառուցվածքային միավորների միջև գործողությունների արդյունք, և ոչ էլ՝ հոլդինգային շահույթի և վնասի արդյունք: Ակտիվների ծավալում այլ փոփոխությունների հաշվի կառուցվածքը համանման է կուտակման այլ հաշիվների կառուցվածքին: Ակտիվների փոփոխությունն արտացոլվում է հաշվի ձախ կողմում, որտեղ առանձին ցույց են տրվում ինչպես ոչ ֆինանսական ակտիվները (արտադրված և ոչ արտադրված), այնպես էլ ֆինանսական ակտիվները: Աջ կողմում արտացոլվում է պասիվների փոփոխությունը և հաշվեկշռող հոդվածը (ակտիվների ծավալի մեջ այլ փոփոխություններով պայմանավորված՝ կապիտալի գուտ արժեքի փոփոխությունը): Հաշվեկշռող հոդվածն իրենից ներկայացնում է տվյալ հաշվում արտացոլվող տարբեր տեսակի փոփոխությունների համար կատարվող գրառումների գումարը: Ակտիվների ծավալում այլ փոփոխությունների հաշվում հաշվի է առնվում ակտիվների և պասիվների փոփոխությունները:

**Վերագնահատման հաշիվը** ցույց է տալիս ըստ ակտիվների և պասիվների հաշվեկրված անվանական հոլդինգային շահույթը: Անվանական հոլդինգային շահույթը որոշվում է որպես օգուտների (շահի) արժեք, որը կուտակվում է ակտիվները տնօրինողի կողմից, դրա գների փոփոխության, կամ, ավելի լայն իմաստով՝ ժամանակի ընթացքում դրա դրամական գնահատականի արդյունքում: Ակտիվի արժեքի աճի կամ պարտավորության արժեքի նվազման արդյունքում դրական փոփոխությունը հանգեցնում է գուտ արժեքի մեծացման, և հակառակը, ակտիվի արժեքի կրճատումը կամ տվյալ պարտավորությունների արժեքի աճը հանգեցնում է գուտ արժեքի նվազման: Վերագնահատման հաշվի հաշվեկշռող հոդվածը բնութագրվում է անվանական հոլդինգային շահույթով/վնասով պայմանավորված կապիտալի գուտ արժեքի փոփոխությունով: Այն որոշվում է որպես դրական և բացասական գրառումների հանրահաշվական գումար, որը բնութագրում է ինստիտուցիոնալ միավորին պատկանող բոլոր ակտիվների և պարտավորությունների անվանական փոփոխությունները:

Անվանական հոլդինգային շահույթը բաժանվում է նրկու առանձին հաշիվների՝ չնգոր հոլդինգային շահույթի և իրական հոլդինգային շահույթի:

*Չնգոր հոլդինգային շահույթը* որոշվում է որպես գումար, որը կհաշվեկրվեր, եթե ժամանակի ընթացքում ընդհանուր գների մակարդակի փոփոխմանը համամասնորեն, փոխվեր ակտիվի գինը: Եթե ակտիվի գինը փոխվում է այն համամասնությամբ ինչպես որ այլ ակտիվների

գները և, միջինում, նրա իրական արժեքը սղաճի ցանկացած տննայնի պայմաններում մնում է անփոփոխ, ապա այդ դեպքում չեզոք հոլդինգային շահույթը հավասար է անվանականին:

*Իրական հոլդինգային շահույթը* որոշվում է որպես լրացուցիչ հսկողության արժեք ռեսուրսների նկատմամբ, որոնք կուտակվում են ակտիվի տնօրինման հետ կապված, ընդհանուր տնտեսության մակարդակով՝ ապրանքների և ծառայությունների գների նկատմամբ ակտիվի գնի փոփոխության արդյունքում: Ակտիվի իրական հոլդինգային շահույթը, դա տվյալ ակտիվի անվանական և չեզոք հոլդինգային շահույթի տարբերությունն է, և նա ինքնին հանդիսանում է տնտեսական կարևոր փոփոխական, քանի որ այն ավելացնում կամ նվազեցնում է ակտիվները տնօրինողների գնողունակությունը:

Անվանական հոլդինգային շահույթի հաշվարկի ժամանակ ակտիվների ձեռք բերման և դուրս գրման արժեքը պետք է գնահատվի այնպես, ինչպես կապիտալի հաշվում և ֆինանսական հաշվում, որպեսզի ապահովվի համաձայնեցումն ամբողջ համակարգում:

**Ակտիվների ու պասիվների հաշվեկշիռը** եզրափակում է համակարգի հաջորդական հաշիվները, ցույց տալով արտադրության, եկամուտների բաշխման և օգտագործման, ինչպես նաև կուտակման հաշիվների արդյունքային մեծությունները: Ակտիվների ու պասիվների հաշվեկշիռը ցույց է տալիս կառուցվածքային միավորների կամ հատվածների սեփականության տակ գտնվող տնտեսական ակտիվների արժեքը և դրանց ֆինանսական պարտավորությունները որոշակի պահին (սովորաբար, հաշվետու ժամանակաշրջանի սկզբի կամ վերջի դրությամբ): Դա կազմվում է ամբողջ տնտեսության և կառուցվածքային հատվածների համար:

Հաշվեկշիռի ձախ կողմում արտացոլվում են տնտեսական ակտիվների տարբեր տեսակներ: Դրանց են վերաբերում այնպիսի տնտեսական օբյեկտներ, որոնց վրա տարածվում է սեփականության (անհատական կամ կոլեկտիվ) իրավունքը և դրանց օգտագործումից կամ տնօրինումից որոշակի ժամանակաշրջանի ընթացքում կարելի է ստանալ տնտեսական օգուտ: Օրինակ, արտադրության մեջ շենքերի կամ սարքավորումների օգտագործումից կարելի է ստանալ եկամուտ՝ շահույթի տեսքով, այլ միավորներին տրամադրված ֆինանսական ակտիվներից կամ ոչ արտադրական ոչ ֆինանսական ակտիվների (հողի, բնական ռեսուրսների և այլն)՝ օգտագործման համար տրամադրումից՝ եկամուտ սեփականությունից: Որոշ ակտիվներ օգտագործում են որպես արժեքների պահպանման միջոց:

Հաշվեկշիռի աջ կողմում արտացոլվում են ֆինանսական պարտավորություններ՝ ըստ ֆինանսական գործիքների, և հաշվեկշռող հողվածը՝ դա սեփական կապիտալի զուտ արժեքն է: Այն որոշվում է որպես ակտիվների և պարտավորությունների արժեքների միջև տարբերություն և բնութագրում է որոշակի պահին կառուցվածքային հատվածի ունեցվածքի կամ երկրի ազգային հարստության արժեքը:



Տնտեսական ակտիվների դասակարգումն ընդգրկում է ոչ ֆինանսական ակտիվներ (արտադրական և ոչ արտադրական ակտիվներ) և ֆինանսական ակտիվներ (մոնետար ոսկի, կանխիկ դրամ և դեպոզիտներ, արժեթղթեր, բացի բաժնետոմսերից, փոխառություն և այլն):

**Ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի արժեքների փոփոխությունը,** դա հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական գործառնությունների (արտադրություն, առք ու վաճառք, անհատույց տրամադրում) արդյունքում, ինչպես նաև այդպիսին չհանդիսացող գործունեության կամ երևույթի արդյունքում (օգտակար հանածոների հայտնաբերում, պատերազմ, բնական աղետներ, սղաճ) տեղի ունեցող փոփոխությունն է: Կուտակման հաշիվներում այս փոփոխություններն արտացոլվում են հետևյալ ձևով՝

1) կապիտալի հետ գործառնությունների հաշվում և ֆինանսական հաշվում արտացոլվում է ակտիվների արժեքի փոփոխությունը՝ կապված տնտեսական գործառնությունների հետ,

2) այլ փոփոխությունների հաշիվներում արտացոլվում է ակտիվների արժեքի փոփոխությունը, որը չի հանդիսանում գործառնությունների արդյունք: Այդ հաշիվները ներառում են.

**ա.** ակտիվների ծավալում այլ փոփոխությունների հաշիվ, որտեղ արտացոլվում է ակտիվների

մուտքագրման կամ դուրս գրման արդյունքում ակտիվների արժեքի փոփոխությունը,

**բ.** վերագնահատման հաշիվ, որտեղ արտացոլվում է գների փոփոխության արդյունքում ակտիվների արժեքի փոփոխությունը:

Ընդհանուր առմամբ ակտիվների փոփոխության մեթոդաբանությունը հետևյալն է.

ակտիվի արժեքը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին՝

**գումարած** հաշվետու ժամանակաշրջանի գործառնությունների արդյունքում (կապիտալի հետ գործառնությունների հաշվի և ֆինանսական հաշվի տվյալներով, որտեղ արտացոլվում են գործառնությունները ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների հետ) ձեռք բերված ակտիվի արժեք հանած դուրս գրված ակտիվի արժեքը,

**գումարած** ակտիվների ծավալում այլ փոփոխությունների արժեքը (ակտիվների ծավալում այլ փոփոխությունների հաշվի տվյալներով),

**գումարած** համապատասխան ժամանակաշրջանում ակտիվի արժեքի գնի փոփոխության արդյունքում ակտիվի արժեքի անվանական աճը կամ նվազումը, այսինքն դրական կամ բացասական հոլդինգային շահույթը (վերագնահատման հաշվի տվյալներով),

**հավասար է** ակտիվի արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջին:

Նմանատիպ փոխադարձ կապեր գոյություն ունեն նաև ֆինանսական պարտավորությունների և սեփական կապիտալի զուտ արժեքի միջև:

### ***2.1.3 Հասկացություններ և դասակարգումներ***

ԱՀՀ-ի բովանդակությունը կախված է ոչ միայն հաշիվների կառուցվածքից, այլ նաև այն բանից, թե՞ տնտեսական հաշվառման մանրամասնված համակարգը ներկայացնող հաշվի մեջ մտած հոդվածները ինչպես են որոշվում և դասակարգվում: Համակարգում ընդունված հասկացությունները և դասակարգումները զգալի ազդեցություն են թողնում համապատասխան տվյալների և դրաց մեկնաբանման հնարավոր եղանակների օգտագործման վրա:

Արտադրության ոլորտի շրջանակը (սահմանը): Արտադրական գործունեությունը դասակարգման համար ունի առաջնային նշանակություն: Արտադրությունը Համակարգում ընդունված է հասկանալ որպես ֆիզիկական գործընթաց, որն իրականացվում է կառուցվածքային միավորների պատասխանատվությամբ, վերահսկմամբ և կառավարմամբ, որտեղ աշխատանքը և ակտիվներն օգտագործվում են ծախսվող ապրանքներն ու ծառայություններն այլ ապրանքների և ծառայությունների թողարկման վերածելու համար: Ընդ որում, ենթադրվում է, որ ապրանքների և ծառայությունների ձևով թողարկված արտադրանքը կարող է վաճառվել շուկայում կամ տրամադրվել այլ միավորի՝ անվճար կամ վճարի դիմաց: Համակարգում արտադրության սահմանը ներառում է ողջ արտադրանքի արտադրությունը, որը փաստորեն նախատեսված է շուկայում վաճառելու կամ փոխանակելու համար: Բացի այդ, արտադրության ոլորտն ընդգրկում է նաև պետական կառավարման մարմինների կամ ՏՏՈԱԿ-ի կողմից տնային տնտեսություններին կամ հասարակությանը տրամադրված ողջ ապրանքները և ծառայությունները: Ապրանքների, ինչպես նաև ծառայությունների՝ որպես արտադրանք (թողարկում) բնութագրելու համար, հիմք է հանդիսանում ապրանքայնության չափանիշը:

Արտադրության սահմաններում ներառվում է նաև տնային տնտեսությունների արտադրական գործունեությունը: Այն ընդգրկում է բոլոր ապրանքների արտադրությունը, անկախ այն բանից՝ վաճառվել են դրանք, թե՞ ոչ, ներառյալ բնակչության օժանդակ տնտեսություններից ստացված գյուղատնտեսական արտադրանքը, սեփական ուժերով կատարված շինարարությունը և տարբեր ծառայությունները, այդ թվում՝ առևտրային, միջնորդական և այլն: Տնային տնտեսությունների կողմից անձնական սպառման (տնային ծառայություններ) համար արտադրված ծառայությունները չեն ընդգրկվում արտադրության սահմաններում, բացառությամբ՝ անձնական կացարաններում բնակվելու համար պայմանականորեն հաշվարկված եկամուտների:

ԱՀՀ-93-ում արտադրության սահմաններն որոշվում են որպես ազգային տնտեսությունում (ներառյալ տվյալ երկրում տնտեսական հետաքրքրություն ունեցող և մշտական հիմունքներով

գործող օտարերկրյա և համատեղ ձեռնարկությունների գործունեությունը) ապրանքներ և ծառայություններ արտադրող միավոր-ռեզիդենտների գործունեություն: Արտադրական գործունեությունը հանդիսանում է հիմնարար և ընդգրկում է շուկայական և ոչ շուկայական (տնտեսական նշանակություն չունեցող և պահանջարկի վրա որոշակիորեն չազդող գներով կամ անվճար իրացվող) ապրանքներ և ծառայություններ արտադրող ձեռնարկությունները:

Որոշ բնական գործընթացներ կարող են դիտարկվել կամ չդիտարկվել որպես արտադրություն՝ կախված պայմաններից, որտեղ դրանք ընթանում են: Որպեսզի այս կամ այն գործունեությունը համարվի արտադրական, անհրաժեշտ պայման է հանդիսանում, արտադրվող արտադրանքի նկատմամբ սեփականության իրավունքից օգտվող որևէ կառուցվածքային միավորի սեփական նախաձեռնությամբ, պատասխանատվությամբ և վերահսկողությամբ դրա իրականացումը: Օրինակ, բաց ծովում ձկնային ռեսուրսների բնական աճը չի դիտարկվում որպես արտադրություն, քանզի այդ գործընթացը չի կառավարվում ոչ մի կառուցվածքային միավորի կողմից, իսկ ձուկը չի պատկանում ոչ մի կառուցվածքային միավորի: Մյուս կողմից, ձկան աճեցումը ձկնաբուծական տնտեսություններում համարվում է արտադրության նույնպիսի գործընթաց, ինչպես անասունների բազմացումը:

Համակարգում արտադրության շրջանակի (սահմանների) ընդգրկումն ունի արտադրության հաշվի սահմաններից գատ նաև այլ նշանակություն: Արտադրության ոլորտի սահմանները որոշում են հաշվի առնվող ավելացված արժեքի գումարը և, հետևաբար, արտադրության արդյունքում ձևավորվող եկամտի ընդհանուր գումարը:

Արտադրության ոլորտի համակարգում ընդգրկվում է նաև ապօրինի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը: Գոյություն ունի ապօրինի արտադրության երկու տեսակ.

*ա) ապրանքների և ծառայությունների արտադրություն, որոնց վաճառքը և տարածումը, ինչպես նաև դրանց տնօրինումն արգելված է օրենքով (թմրադեղեր, զենք և այլն),*

*բ) սովորաբար օրինականությանը համապատասխանող արտադրական գործունեություն, որը ձեռք է բերում ոչ օրինական բնույթ, եթե իրականացվում է դրա լիազորությունները չունեցող արտադրողների կողմից (բժշկական ծառայություններ՝ մատուցված չարտոնագրված բժիշկների կողմից):*

Արտադրության սահմաններում ընդգրկվում է նաև թաքնված արտադրությունը: Թաքնված արտադրությունը կարող է միանգամայն օրինական լինել, սակայն, դրա հետ մեկտեղ, պետական մարմիններից գիտակցաբար այն թաքցվում է հետևյալ պատճառներով.

*ա) եկամտահարկի, ավելացված արժեքի հարկի կամ այլ հարկերի վճարումից խուսափելու,*

*բ) սոցիալական ապահովագրության համար վճարներից խուսափելու,*

գ) որոշ օրինականացված չափանիշներ խախտելու, թաքցնելու, օրինակ՝ նվազագույն աշխատավարձը,

դ) որոշակի վարչական ընթացակարգերից խուսափելու (այնպիսիք, ինչպիսիք են՝ վիճակագրական հարցաթերթերի կամ հաշվետվությունների այլ ձևերի լրացումը):

Արտադրական միավորները, որոնք ընդգրկված են այդպիսի թաքցվող (ընդհատակյա) գործունեության մեջ, ձևավորում են, այսպես կոչված, "ստվերային" տնտեսությունը: Համակարգում անհրաժեշտություն չկա ճշգրիտ սահման անցկացնել "ստվերային" և ապօրինի արտադրությունների միջև, քանի որ երկու տեսակներն էլ, ամեն դեպքում, ընդգրկվում են արտադրության ոլորտում:

**Սպառման ոլորտի շրջանակը (սահմանը):** Սպառման ոլորտի սահմանը որոշում է արտադրության միջոցով ձևավորվող եկամուտների ընդհանուր գումարը: Համանմանորեն՝ սպառման ոլորտի սահմանը պայմանավորում է վերջնական սպառմանն ուղղված տնային տնտեսությունների ծախսերում ընդգրկվող ապրանքների և ծառայությունների տեսականին: Այդ ծախսերն ընդգրկում են նաև տնային տնտեսությունների կողմից արտադրված և սպառված գյուղատնտեսական արտադրանքի գնահատված արժեքը, բնակելի կացարանների սեփականատերերի կողմից սպառվող բնակարանային ծառայությունների արժեքը, որը, սակայն, չի ընդգրկում սեփական ուժերով կատարած տրանսպորտային միջոցների վերականգնման և պահպանման, երկարաժամկետ օգտագործման տնտեսական ապրանքների, բնակարանների մաքրման, երեխաներին խնամելու և դաստիարակելու, ինչպես նաև, անձնական վերջնական սպառման համար արտադրված համանման ծառայությունների արժեքը:

**Ազգային տնտեսության շրջանակը (սահմանը):** Համակարգի հաշիվները կազմվում են կառուցվածքային միավոր-ռեզիդենտների համար, խմբավորված՝ ըստ հատվածների և ենթահատվածների:

Ռ-ռեզիդենտ հասկացությունը նույնն է, ինչը և օգտագործվում է ԱՀՀ-ի վճարային հաշվեկշիռի հրահանգներում:

Կառուցվածքային միավորը տվյալ երկրի տնտեսությունում համարվում է ռեզիդենտ, եթե այդ տարածքում է գտնվում նրա տնտեսական շահերի կենտրոնը, այսինքն՝ եթե նա զբաղվում կամ նախատեսում է զբաղվել տնտեսական գործունեության որևէ տեսակով, անորոշ ժամանակով կամ երկարաժամկետ իրականացում է մեծածավալ մասշտաբների գործառնություններ (սովորաբար այն հավասարեցվում է մեկ տարվա): Երկրի ՀՆԱ-ն հավասար է բոլոր այն կառուցվածքային ռեզիդենտ-միավորների համախառն ավելացված արժեքի գումարին, որոնք զբաղվում են արտադրությամբ (գումարած գուտ հարկերը): Այդ մեծությունը պարտադիր չէ, որ համահավասար լինի երկրի ազգային տնտեսության աշխարհագրական սահմաններում իրականացվող երկրի ողջ արտադրական գործունեության համախառն ավելացված արժեքի գումարին: Կառուցվածքային ռեզիդենտ-միավորների արտադրության մի մասը կարող է իրականացվել արտերկրում, և

հակառակը՝ արտադրության մի մասը, որն իրականացվում է նրկրի տնտեսության սահմաններում, վերագրվում է արտերկրյա կառուցվածքային միավորներին:

#### ***2.1.4 Դասակարգման սկզբունքը և հիմնական տեսակները (կատեգորիաները)***

**Ազգային հաշիվների համակարգն** ընդգրկում է մի շարք դասակարգումներ, որոնք հայտնի չափով կազմում են հաշիվների հիմքը և թույլ են տալիս ընդգրկել տարբեր տեսակետներ՝

*ա) կառուցվածքային միավորներ և հատվածներ,*

*բ) գործառնություններ և այլ հոսքեր,*

*գ) գործունեության տեսակներ (հաստատություններ), ճյուղեր:*

Կառուցվածքային միավորներ հանդիսանում են տնտեսական այն միավորները, որոնք ընդունակ են տիրապետել ակտիվներին և իրենց անունից ստանձնել պարտավորություններ: Դրանք կարող են զբաղվել գործառնությունների բոլոր տեսակներով և տնտեսական գործունեության բոլոր տեսակետներից հանդիսանալ որոշումներ ընդունելու կենտրոններ: Կախված իրենց հիմնական ֆունկցիաներից, վարքից և նպատակից, կառուցվածքային միավորները խմբավորվում են ըստ հիմնական կառուցվածքային հատվածների: Հատվածն իրենից ներկայացնում է իրագործվող ֆունկցիաների և ֆինանսավորման աղբյուրների տեսանկյունից միատարր կառուցվածքային միավորների համակցություն:

Տարբերակվում են ազգային տնտեսության հետևյալ հինգ հատվածները՝

- ոչ ֆինանսական ձեռնարկություններ (կորպորացիաներ),*
- ֆինանսական հիմնարկներ,*
- պետական կառավարման մարմիններ,*
- տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններ,*
- տնային տնտեսություններ:*

**Ոչ ֆինանսական ձեռնարկությունները** կառուցվածքային միավորներ են, որոնք գլխավորապես զբաղված են շուկայական ապրանքների և ոչ ֆինանսական ծառայությունների արտադրությամբ:

**Ֆինանսական հիմնարկները** կառուցվածքային միավորներ են, որոնք հիմնականում զբաղվում են ֆինանսական միջնորդությամբ կամ օժանդակ ֆինանսական գործունեությամբ:

**Պետական կառավարման մարմինները** կառուցվածքային միավորներ են, որոնք իրենց քաղաքական գործունեությանը և տնտեսության կարգավորման դերի կատարմանը զուգընթաց,

արտադրում են առավելապես ոչ շուկայական ծառայություններ՝ անհատական կամ կոլեկտիվ սպառման համար, ինչպես նաև, վերաբաշխում են եկամուտներն ու հարստությունը:

**Տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններն** իրավաբանական անձինք են, որոնք գլխավորապես զբաղվում են տնային տնտեսությունների համար ոչ շուկայական ծառայությունների արտադրությամբ: Դրանց կարգավիճակը թույլ չի տալիս այդ կազմակերպությունները ստեղծող միավորների համար լինել եկամտի, շահույթի կամ այլ ֆինանսական շահի աղբյուր: Այդ կազմակերպությունների հիմնական միջոցները գոյանում են տնային տնտեսությունների կամավոր մուծումներից:

**Տնային տնտեսություններն** անձանց ոչ մեծ խումբ է, որոնք բնակվում են միևնույն կացարանում, միավորում իրենց հարստությունը և եկամուտը կամ դրա մի մասը, և որոնք միասին սպառում են ապրանքների և ծառայությունների որոշ տեսակներ, հիմնականում՝ կացարանը և սննդամթերքը: Տնային տնտեսությունների հատվածում ներառված միավորները մասնակցում են արտադրությանը՝ տրամադրելով իրենց աշխատուժը և ձեռք են բերում ապրանքներ և ծառայություններ՝ շուկայում: Բացի դրանից, տնային տնտեսությունները նրբեմն հանդիսանում են մանր, ոչ կորպորատիվ ձեռնարկությունների (ֆերմաներ, ընտանեկան ռեստորաններ, խանութներ և այլն) սեփականատերեր: Այդ ոչ կորպորատիվ ձեռնարկություններն արտադրում են ապրանքներ և ծառայություններ՝ շուկայում վաճառքի համար, բայց, մասնավորապես, նաև սեփական սպառման համար: Ոչ կորպորատիվ ձեռնարկությունների գործունեության ֆինանսական արդյունքը հանդիսանում է խառը եկամուտը, որը ներառում է ինչպես շահույթի տարրեր, այնպես էլ աշխատանքի վարձատրություն:

Վերը թվարկված հատվածների փոխադարձ կապն այլ երկրների հետ արտացոլելու նպատակով ձևավորվում է պայմանական հատված՝ "արտերկիր", որը միավորում է բոլոր կառուցվածքային միավոր- ոչ ռեզիդենտներին այն մասում, որտեղ դրանք փոխհամագործակցում են ազգային տնտեսության ռեզիդենտների հետ:

**Գործառնություններ և այլ հոսքեր:** Գործառնությունը կառուցվածքային միավորների միջև կատարվող տնտեսական հոսք է: Կառուցվածքային միավորները և դրանց անդամները կատարում են տնտեսական ֆունկցիաներ: Այդ գործողությունների արդյունքում ծագում են տնտեսական հոսքեր, որոնք ոչ միայն կոնկրետ բնութագիր ունեն, այլև հանգեցնում են տնտեսական արժեքի ստեղծման, վերաձևավորման, փոխանակման, փոխանցման կամ ոչնչացման: Տնտեսական արժեքը կարող է ընդունել կոնկրետ օբյեկտների սեփականության իրավունքի կամ ոչ նյութական ակտիվների ձև: Տնտեսական գործողությունների մեծ մասը ձեռնարկվում են կառուցվածքային միավորների փոխադարձ համաձայնությամբ, ինչպես նաև, որոշ դեպքերում, կարող են վերաբերվել միայն մեկ կառուցվածքային միավորի (օրինակ, սեփական արտադրության միջոցով հիմնական կապիտալի կուտակումը): Գործառնությունները և այլ հոսքերը ստորաբաժանվում են.

ա) գործառնություններ ապրանքների և ծառայությունների հետ, որոնք բնութագրում են ապրանքների և ծառայությունների ստեղծումը (արտադրանք) և օգտագործումը (միջանկյալ սպառում, կուտակում),

բ) բաշխողական գործառնություններն իրենցից ներկայացնում են գործառնություններ, որոնց միջոցով ավելացված արժեքը բաշխվում է աշխատուժի, կապիտալի և պետական կառավարման մարմինների միջև, ինչպես նաև, գործառնություններ՝ կապված եկամուտների և հարստության վերաբաշխման հետ,

գ) գործառնություններ ֆինանսական գործիքների հետ (կամ ֆինանսական գործառնություններ), որոնք վերաբերվում են ֆինանսական ակտիվների գուտ ձեռքբերմանը կամ ֆինանսական գործիքներից յուրաքանչյուր տեսակի նկատմամբ գուտ պարտավորությունների ընդունմանը:

դ) կուտակումը բնութագրող այլ գրառումներ, որոնք ընդգրկում են նախկինում հաշվի չառնված գործառնությունները և այլ տնտեսական հոսքերը, փոխում են ակտիվների կամ պասիվների քանակը կամ արժեքը (հիմնական կապիտալի սպառում, տնտեսական և ոչ տնտեսական բնույթի այլ տնտեսական հոսքեր՝ օգտակար հանածոների հայտնաբերում կամ պաշարների սպառում, գների փոփոխության հետևանքով տնտեսական ակտիվների և պարտավորությունների արժեքի փոփոխություն՝ որպես պաշարներ դրանց պահպանման ընթացքում, տարերային աղետների հետևանքներ):

**Գործունեության տեսակներ (հաստատություններ), ճյուղեր:** Ազգային հաշիվներում, ապրանքներ և ծառայություններ արտադրողի դերում հանդես եկող կառուցվածքային միավորների առանձնացման համար ընդունված է կիրառել "ձեռնարկություն" տերմինը: Ձեռնարկությունը հիմնվում է իր կողմից իրականացվող գործունեության տեսակի վրա: Յուրաքանչյուր ձեռնարկություն ունի գործունեության մեկ կամ մի քանի տեսակ: Ձեռնարկությունները խմբավորվում են հիմնական գործունեության տեսակով, հետո միավորվում են "ճյուղի" մեջ: **Ճյուղը** բնորոշվում է որպես հաստատությունների, այսինքն՝ ձեռնարկությունների կամ դրանց ստորաբաժանումների համակցություն, որոնք գտնվում են միևնույն վայրում, զբաղվում են արտադրական գործունեության մեկ տեսակով կամ որոնց հիմնական գործունեությանը բաժին է ընկնում ավելացված արժեքի մեծ մասը: Արտադրական գործունեության միաժամանակ մի քանի տեսակներով զբաղվող ձեռնարկությունները բաժանվում են հաստատությունների: Ձեռնարկությունից՝ հաստատության տեսքով որոշակի գործունեության տեսակի առանձնացման անհնարինության դեպքում այն հաշվառվում է հիմնական գործունեության հետ միասին:

Գործունեության բաժանումը տեսակների իրականացվում է գործունեության հիմնական ցուցանիշների՝ արտադրության ծավալի (թողարկում), ծախսերի, աշխատողների թվաքանակի և այլնի հիման վրա:

### **2.1.5. ԱՏՏ-ի հիմնական գուցանիշները և դրանց հաշվարկի եղանակները**

Ապրանքների և ծառայությունների **թողարկումն** իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում ազգային տնտեսության ռեզիդենտ-միավորների արտադրական գործունեության արդյունք հանդիսացող ապրանքների և ծառայությունների գումարային արժեքը (հիմնական գներով): Իրացված ապրանքներն ու ծառայությունները թողարկման մեջ են ներառվում փաստացի իրացման արժեքով, իսկ չիրացված պատրաստի արտադրանքը և անավարտ արտադրությունը՝ միջին շուկայական գներով:

Բանկերի արտադրանքի թողարկումը բաղկացած է երկու մասից՝ բանկերի կողմից մատուցված ծառայությունների (հաշիվների վարում և այլն) դիմաց վճարներից և պայմանականորեն հաշվարկված արտադրանքից, որը չափվում է որպես բանկերի կողմից տրամադրված և ստացված վարկերի և դեպոզիտների տոկոսների տարբերություն:

Ապահովագրական կազմակերպությունների համար թողարկումը ապահովագրական կազմակերպությունների ստացած ապահովագրավճարների (պրեմիաների) և ապահովագրական հատուցումների միջև եղած տարբերությունն է:

Առևտրում թողարկումը որոշվում է որպես առևտրական հավելվածների (վրադիրների, զեղչերի) գումար:

Բնակարանային տնտեսությունում շուկայական ծառայություններին սովորաբար վերաբերվում են տեղական ինքնակառավարման մարմինների (տեղական խորհուրդներ), բնակարանային շինարարական կոոպերատիվների բնակելի ֆոնդերին ուղղված, բնակտարածքը վարձակալության և ենթավարձակալության տալու հետ կապված ծառայությունները: Շուկայական ծառայությունների թողարկումը ձևավորվում է պայմանագրով սահմանված փաստացի վարձից, վարձման և վարձակալական վճարից (բնակարանային և վարձակալական վճարներ) և բնակարանային ու բնակարանային շինարարական կոոպերատիվների շահագործման ծախսերի վճարների չափից:

Ոչ շուկայական բնակարանային ծառայություններ են համարվում վարչական, հասարակական կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող բնակֆոնդի գծով ծառայությունները, ինչպես նաև սեփական տանը բնակվելու ծառայությունները: Այս ծառայությունների թողարկման ծավալը գնահատվում է բնակֆոնդի սպասարկման ծախսերի մեծությամբ՝ բացառելով վարձավճարն ու բնակվարձը:

Ոչ շուկայական ծառայությունները ճյուղերի մեծ մասում գնահատվում են ինքնարժեքով, այսինքն, այդ ծառայությունների մատուցման համար կատարված փաստացի ընթացիկ ծախսերով գումարած հիմնական կապիտալի սպառումը: Ընթացիկ ծախսերին են վերաբերվում աշխատավարձը, նյութական ծախսերը, այն ծառայությունների դիմաց վճարները, որոնք կատարվել են արտադրության գործընթացում: Կապիտալ ծախսերը, այդ թվում՝ կապիտալ նորոգմանն ուղղված ծախսերը, ընթացիկ ծախսերին չեն վերաբերվում:



**Միջանկյալ սպառումը** կազմված է ապրանքների և ծառայությունների արժեքից, որոնք հաշվետու ժամանակաշրջանում ամբողջությամբ սպառվում կամ վերափոխվում են արտադրության ընթացքում: Միջանկյալ սպառման մեջ չի մտնում հիմնական կապիտալի սպառումը:

Միջանկյալ սպառման կազմում առանձին դիրքով ներառվում են ֆինանսական միջնորդների (բանկերի) անուղակիորեն չափվող ծառայությունների թողարկումը: Տեսականորեն, բանկերի ծառայությունները պետք է ներառվեն այն ճյուղերի միջանկյալ սպառման մեջ, որոնք փաստորեն սպառում են այդ ծառայությունները: Սակայն, մեծամասամբ, այդպիսի հաշվարկի համար անհրաժեշտ տեղեկատվությունը բացակայում է: Այդ պատճառով, համաշխարհային պրակտիկայում ընդունված է ապրանքներ արտադրող կամ ծառայություններ մատուցող բոլոր մնացած ճյուղերի հետ մեկտեղ հաշվարկի մեջ ներառել պայմանական միավոր, որի միակ տնտեսական ֆունկցիան հանդիսանում է բանկային այն ծառայությունների սպառումը, որոնք հնարավոր չէ հաշվի առնել ճյուղերի միջանկյալ սպառման կազմում:

**Համախառն ավելացված արժեքը** հաշվարկվում է ճյուղային մակարդակով՝ որպես ապրանքների և ծառայությունների թողարկման ու միջանկյալ սպառման տարբերություն: "Համախառն" տերմինը ցույց է տալիս, որ ցուցանիշն իր մեջ ներառում է հիմնական կապիտալի արժեքի սպառումն արտադրության գործընթացում:

**Ապրանքների և ներմուծման գուտ հարկեր:** Ապրանքների հարկերը ներառում են այն հարկերը, որոնց չափերն ուղղակիորեն կախված են թողարկված արտադրանքի և մատուցված ծառայությունների արժեքից: Դրանց թվին են դասվում ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը և այլն: Ներմուծման հարկը դա ներմուծվող ապրանքներից և ծառայություններից գանձվող հարկն է: "Գուտ" տերմինը նշանակում է, որ հարկերը ցույց են տրվում առանց համապատասխան սուբսիդիաների: Սուբսիդիաները պետական բյուջեից որոշակի ապրանքների ու ծառայությունների արտադրության նպատակով ձեռնարկություններին տրամադրվող անհատույց ընթացիկ վճարներն են:

**Համախառն ներքին արդյունքն** արտադրության փուլում ստացվում է ճյուղերի համախառն ավելացված արժեքի գումարման ճանապարհով: Համախառն ներքին արդյունքը հաշվարկվում է շուկայական գներով, այսինքն, իր մեջ ներառում է նաև ապրանքների և ներմուծման "գուտ" հարկերը:

**Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունն** որոշվում է հաշվետու ժամանակաշրջանում վարձու աշխատողների կատարած աշխատանքների համար գործատուի կողմից դրամական կամ բենեֆեն ձևով վճարած բոլոր վարձատրությունների գումարով: Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունը հաշվառվում է հաշվեգրված գումարներով և իր մեջ ընդգրկում է նաև սոցիալական ապահովագրության վճարները, ներառյալ՝ պետական կենսաթոշակային հիմնադրամի, զբաղվածության հիմնադրամի, բնակչության սոցիալական ապահովության և պարտադիր բժշկական ապահովագրության հիմնադրամի հատկացումները,

